



ԺԸ ՏԱՐԻ, ԹԻԻ 8

1860

ՕԳՈՍՏՈՍ 1

Աստիկի ու Քաղաքակիրք պատանի: (Տես երես 193)

ԽԹ

Ընտանեկան ընկերոջիւն:

Հայր և մայր իրենց որդւոց հետ մէկտեղ ընտանիք կը ձեւացնեն: Փեւային և հարսին միանալուն կապը կ'ըսուի Ամուսնութիւն: Երկայ քաղաքական դաշնակցութիւն մըն է՝ որ եկեղեցական սուրբ խորհրդով մը կը վաւերացուի, որով այր և կին կը պարտաւորին մէկմէկու հաւատարիմ ըլլալու, փոխադարձ մէկմէկու երջանկութեանը քանալու, որդիքներ ունենալու ու զանոնք կրթելու, դաստիարակելու՝ ընկերութեան բարւոյն և Երտուծոյ փառաքը համար:

Իսկ որ կ'ուզես կարգուիլ առանց նախ քու կնիկանդ ու ապագայ որդւոցդ ապրուստն ապահովցնելու, ինչ կ'ընես. վշտացելոյ ու կարօտելոյ թիւը կը շատցնես: Եւ լաւ է ինքնիրենդ Ա՛հ, ինչ թշուառ է՛մ ըսելով հաւաչես՝

քան թէ կնոջդ ու որդւոցդ վրայ նայելով Ի՛նչ թշուառ է՛մ գոչես:

Եւսպիսի մեծ քայլ մը ու անլուծանելի կապ մը պէտք չէ առանց ծնողաց խորհրդին գործել, առանց լաւ մը քննած ու դիտած ըլլալու թէ արդեօք ուզած կինդ զքեզ երջանիկ ընելու համար պահանջուած կատարելութիւններն ունի՞ թէ չէ: Ոմանք հարուստ օժտին միայն աչքերնին կը տնկեն. ուրիշներն ալ յախուռն իրենց սիրտը յափշտակող բանին ետեւէն կ'իյնան՝ բայց վերջը վերջը կը զղջան: Վեցնակարեւոր օժիտը առաքինութիւնն է, անոր ետեւէն կու գայ բարուց քաղցրութիւն. ասոնցմէ դուրս ուրիշ ինչ որ ըլլայ բոլորն ալ դիպուածական են: Վարդուն մէկը փիլիսոփայի մը պատմելով իր հարսին օժիտները սկսու կարգաւ շարել՝ գեղեցկութիւն, հարստութիւն, հանճար, ազնուականութիւն, ազգականութիւն նշանաւոր մարդկանց հետ ու կրթութիւն. իսկ փիլիսոփան աս ամէն մէկ կատարելութիւններս լսելուն՝ զոյ մը

կը դնէր առջևի թղթոյն վրայ . բայց երբոր ամենէն վերջը աւելցուց բարուց քաղցրութիւնը, ան ատեն փիլիսոփան զրոյներուն առջև մէկ թիւը դրաւ, որով անգին ածէք ունեցան ան զրոյները:

Ահա, երանի ան տան ուր այր և կին մէկ սիրտ մէկ հոգի կ'ապրին . բայց դժոխք կը դառնայ այն տեղը ուր որ միութիւն չկայ: Այր և կին հաւասար են, (յօդ. 16). ուրեմն կինը պէտք չէ իբրեւ աղախին մը սեպուի ամուսնոյն առջև . բայց որովհետեւ աւելի տրկար է ու անփորձ՝ ինչպէս պզտի եղբայր մը մեծ եղբօրը, այնպէս հարսն ալ ամուսնոյն պէտք է հպատակի: Այնպէս պէտք է սիրեն, մէկմէկու վրայ պէտք է կատարեալ վստահութիւն ունենան, զոհեր ընեն, մէկմէկու կարօտութիւնը լեցնեն, հիւանդութեան մէջ զիրար խնամեն, դժբաղդութեանց մէջ մէկ-զմէկ մխիթարեն, և այսպէս պէտք է ջանան միշտ մէկմէկու ուրախութեան պատճառ ըլլան ու իրարու վշտերը թեթեւցնեն: Փեսան պէտք է սիրէ, յարգէ ու խնամէ զհարսը ու որդւոցը և լծակցին ապրուստը ճարէ: Հարսն ալ իր պարտուցը հաւատարիմ պէտք է ըլլայ, անկեղծ, համբերող ու պարկեշտ . յիշէ որ մարդիկ կը շինեն ու կանայք կը պահեն, և առանձին փութով ու մտադրութեամբ երախտագէտ պէտք է ըլլայ փեսային հոգատարութեանցը:

Ծնողաց իրենց որդւոց վրայ ունեցած հոգը յօրինաց հաստատեալ իշխանութիւն մը կուտայ իրենց: () րէնքը կը պահանջէ որ որդիք ինչուան իրենց քսանըչորս տարուան հասակը կրօնէր կամ պահպանութեան տակ սեպուին, այսինքն՝ չկարենան առանց ծնողաց կամ իրենց խնամակալուաց հաւանութեանը դաշնադրութիւն մը յարմարցնել . իսկ երբ ծնողքը կը մեռնին, որդին ծառանգութեամբ իրենց կը յաջորդէ, այսինքն իրենց ունեցածին տէր կ'ըլլայ, ըստ պայմանաց կտակին և ըստ որոշման օրինաց:

Ծ

Դաստիարակութիւն:

Բայց ոչինչ բան մը տուած կ'ըլլայ ով որ միայն կեանք կուտայ իրեն որդւոցը: Հայրն ինչպէս մայրը խնամածով պատկերքն են . իսկ խնամած միայն աշխարհքս ստեղծելովը գոհ չեղաւ, այլ նաև կը պահպանէ զայն ու կը կառավարէ, այսպէս ալ ծնողք պարտական են իրենց որդիքը կրթելու, որպէս զի կայսր, ընկերասէր և առեալ ըլլան:

Վրեժն որ կայտառ ըլլան, չարքաշուութեան, չափաւոր կրթութեան ու աշխատութեան վարժեցուր . վտանգաւոր առիթներէ հեռու բռնէ զիրենք՝ բայց առանց շատ վախցնելու, այլ մանաւանդ թէ քաջասիրտ ընել ջանա:

Ինկերասէր ընելու համար կրթէ զիրենք որ իրենց նմանեացն օգնեն ու անոնց վրայ գութ ու կարեկցութիւն ունենան . ընեն ուրիշի միայն այն բանը ինչ որ կը փափաքին որ այլք իրենց ընեն ու համբերութիւն սովորին . ջանք ըրէ դարձեալ որ լաւ վիճակ մը ու արհեստ մը ունենան ձեռքերնին: Վաւ ուսմունք ալ սովորեցուր, բայց միշտ յիշելով որ աշխարհքս առաքինի ու քաղաքակիրթ մարդկանց աւելի կարօտութիւն ունի՝ քան թէ գիտուններու: Աշխարհ ու անհրաժեշտ կարևոր գիտութիւնը՝ որ եթէ զանց առնես կը մեղանչես, հաւատոյ սկզբունքները սովորեցնեն է, ու կարգալ գրել, հաշիւ բռնել, ու չթողուր որ մտքին մէջ նախապաշարմունքներ, աւելորդապաշտութիւններ ու սխալ կարծիքներ տեղիք գտնան:

Վրեժն որ առաքինի ըլլան, իրենց սկզբնական կիրքերուն վրայ հսկէ և առ բարին ուղղէ . որ և իցէ ախտ մը առանց պատժոյ մի թողուր, ու ջանա օգտակար և վեհանձն գործոց սէր ձգես սրտերնուն մէջ՝ առաքինի անձանց գործքերն օրինակ դնելով առջևնին և անոնց բարի հետեւանքները: Խոստ պատ

չաճին գովեստ՝ ըստ պատշաճին յանգիմանութիւն . ընկերներուն վրայ աչք ունենալ . առանց կողմնակցութեան սիրել խանդավառանք՝ բայց ոչ կուրօրէն , տղէ մը մարդկանց հաւասար բան չպահանջել՝ այլ յիշել որ մարդ պիտի ըլլայ , ու խօսքէ աւելի գործքով ու խտուծոյ վախը սրտին մէջ տալաւ . ընկող զինքը կրթել :

Որդւոց թողլու լաւագոյն ժառանգութիւնն , ով ծնողք , դաստիարակութիւնն է : Խոնարհութեան ու հրպատակութեան վարժեցուցէք ձեր որդիքը , սէր ու վստահութիւն ունեցէք վրանին , և բանի գործքի զրէք : Այսպէս խիստ շատ վշտերէ ազատ կ'ըլլաք . վասն զի մարդ մը որչափ աւելի կիրթ ըլլայ՝ այնչափ աւելի առաքինի կ'ըլլայ . որով կրնաք յուսալ որ երբ հասակին առնեն մեծնան՝ փոխադարձաբար սիրեն զձեզ ու ինամեն :

ԾԱ

Որդիք :

Ո՛հ , ինչ քաղցր անուն է հայր առնուն . նոյն իսկ խտուած երբ մեզի աղօթք ընելուն կերպը սովորեցուց՝ ու զեց որ հայր ըսելով սկսինք :

Հայրդ եղաւ քեզի կեանք տուող , ով պատանեակ , հիմա անոր հաւասար ուրիշ հարկաւոր բան մըն ալ կու տայ՝ որ է դաստիարակութիւնը . և այսպէս առանց քու աշխատելուդ ինքը քու կարօտութիւնդ կը լեցնէ , քու բաղդը շինելու համար կը քրտնի ու կը յոգնի . քու ընտրելագոյն բարեկամդ է , միշտ հետդ է , անդադար նորանոր բարիքներով զքեզ կը լեցնէ . վերջապէս , աւելն ունեցածք քեզի պիտի թողու :

Իսկ մայրդ . որչափ քեզի համար ցաւ քաշեց . երբ տղայ էիր ու չէիր կրնար շարժիլ , չէիր կրնար խօսիլ , բան չէիր հասկընար , որչափ նեղութեանց համբերեց քեզի համար , որչափ գիշեր առանց քնանալու անցուց , որչափ զուարճութեանց պատճառ եղաւ քեզի . հետդ

ինտաց , հետդ լացաւ . ով զքեզ հիւանդութեանդ ժամանակ հոգաց , ով տկարութեանդ օգնական եղաւ , ով խօսիլ սովորեցուց քեզի . ով դարձեալ հօրդ անունը և բուն հայրդ որ երկինքն է պաշտել ու փառաւորել քեզի սովորեցուց :

Հիմա ալ նայէ որչափ սիրով ծնողքդ զքեզ կը կրթեն : () Ի՞նչ որ խիստ կ'երեւնան ստիպելովնին որ ուսման ու արհեստի մը ետեւէ ըլլաս՝ գիտնաս որ լաւութեանդ համար կ'ընեն , որպէս զի կարենաս արժանապէս առաքինեաց ընկերութեանը մէջ մտնալ . թեթեւ պակսութիւն մըն ալ ընես կ'ուղղեն , վասն զի գիտեն որ երթալով հետզհետէ կը մեծնան . ան որ հիմա քիչ մը շատ ուտել սիրող է՝ ատենօք անժուժկալու թեամբ կրնայ հիւանդանալ ու առողջութիւնը կորսնցընել . բարկացողը կատաղի բան մը կը դառնայ . անհոգը՝ ծոյլ . կատակով ըսուած սուտ մը թէ որ չուղղուի՝ կատարեալ ստախօսութե կը փոխուի : () Ի՞նչեալ ըլլան ծնողք որ պատշաճ պատիժներով մեր սրտին սկզբնական ախտերուն արմատները կը խլեն :

Եւ առաւօտ , ով պատանեակ , ելլելուդ պէս , խտուծոյ շնորհակալ ըլլալէն ետքը , մէկէն վազեցիր հայրդ բարեւելու . երբոր դպրոցէն դառնաս Երեւան , միտքդ եկա՞ն կամ պիտի գա՞ն արդեօք ան խեղճերը որ ոչ հայր ունին և ոչ մայր . աղօթք ըրէ որ խտուած զիրենք պահէ , և վերջը յիշելով որ դուն ալ օր մը իրենցմէ պիտի զրկուիս՝ կըրկնապատկէ քու սէրդ , յարգէ , օգնէ ու զութ ունեցիր վրանին :

Խնասուններն անգամ իրենց ծնողքը կը սիրեն . իսկ պատուելը՝ բարեւ տալուն ու արտաքին քաղաքավարական կերպերուն վրայ կեցած չէ , այլ իրենց հրամանաց խոնարհութեամբ ու հեղութեամբ հպատակելուն վրայ է : () Տնողացդ օգնելով , իրենց քու օգտիդ համար ըրած այնչափ աշխատութեանց փոխարէն , երախտագիտութե պարտքդ

կատարած կ'ըլլաս : թէ որ պակասու-
թիւններ ունին , կ'ըսես , ո՞վ կայ որ
պակասութիւն չունենայ . նայէ , իրենք
քուկիմներուդ ինչպէս արգահատեցան :
Վրանի ծերանան՝ հիւանդոտ , տրտնջա-
ցող ու նեղսիրտ կ'ըլլան . և միթէ ա-
տոնց համար պիտի անարգէս ղիրենք
ու անգթութիւն բանեցընես . մտածէ
թէ մենք ալ տղայութեան ժամանակ-
նիս ինչպէս հիւանդոտ , կանչուըռտող
ու նեղսիրտ էինք :

Պատուեալ զհայր Դո և զմայր՝ ասիկայ
Լստուծոյ պատուիրանքն է : Բարի որ-
դի մը բարի քաղաքացի կ'ըլլայ . և ինչ-
պէս որ մենք մեր ծնողացը հետ վա-
րուինք՝ մեր որդիքն ալ մեզի հետ նոյն
պէս պիտի վարուին : Ետեն կու գայ որ
դուն ալ տարիքդ առնելով որդւոց տէր
պիտի ըլլաս . սեպէ թէ անոնք քեզմէ
հեռանան , խորհուրդներուդ մօտիկ չը-
նեն ու կարօտութիւնդ չհոգան , անանկ
որ՝ այն միջոցին որ աւելի կարօտ ես՝
քեզի ընկերութիւն ընող մը չունենաս ,
ինչ վիշտ , ինչ ցաւ չէր ըլլար քեզի աս
բանս : Եւ , չըլլայ որ ծնողացդ աս
վշտերը պատճառելով նոյները դուն ալ
քաշես :

ԾԲ

Եղբարք :

Ո՛հ , ինչ սիրուն , ինչ լուս բան է
երբոր եղբարք մէկտեղ կը բնակին .
հոս , հոս , եղբարք իմ և քորք , եկէք
իմ չորս կողմս պատեցէք . բնութեան
ինծի տուած բարեկամներն էք դուք .
նոյն ախորժն ունինք , նոյն ցաւերն ու
մի և նոյն յոյսերը . ո՛հ , ուրեմն մէկմէ-
կու բարեացը փափաքինք , իրարու վրայ
տեսած պակասութեանցն արգահա-
տինք , կարօտութիւն որ ունենանք՝ օգ-
նենք , բարեգործութեան յորդորենք
մէկիւմէկ . ես մէջերնիս ամենէն մեծն
եմ՝ բայց դիտեմ որ ամենէն սղտիկն
ալ ինծի հաւասար է , ու ես որ աւելի
փորձ ունիմ՝ պէտք է ուրիշներուն ի-
րեւ ինամակալ ըլլամ , աւելի սիրեմ

զձեզ , բարի օրինակ ըլլամ , ու թէ որ
դժբաղդաբար հայրերնիս մեռնի՝ ես
իրեն տեղը բռնեմ . դուք ալ փոխա-
դարձ պէտք է բոլոր սրտանց ու ձեռ-
քերնէդ եկածին չափ իմ բարիքս ու-
զէք , և իմ ձեր վրայ ցուցըցած խնա-
մոցս դուք ալ ձեր կողմանէ օգնէք :

Ենասանելի է ան տունը որ եղբայ-
րական միաբանութեան վրայ կեցած է .
ու երբոր մարդիկ ուզենան ճանչնալ
քու ինչ տեսակ մարդ ըլլալդ , կը դի-
տեն թէ եղբարցդ հետ ինչպէս կը վա-
րուիս :

Եոյնպէս պարտական ենք մեր ուրիշ
ազգականներուն վրայ վերջի աստիճան
սէր ցուցընել , և ամենայն փութով ,
յօժարութեամբ ու սրտանց իրենց ծա-
ռայել :

ԾԳ

Բարեկամք :

Օ՛րաւնքն ալ սիրելով հանդերձ կան
անձինք զորոնք ուրիշներէն աւելի կը
սիրենք . և արդէն դուք , ո՞վ պատա-
նեակք , ձեր ընկերակցաց մէջ մէկն ու-
նիք որուն հետ աւելի սիրով կը վարուիք ,
որուն ձեր սիրտը կը բանաք ու քաշած
թեթեւ նեղութիւննիդ կը պատմէք .
այն է ահաւասիկ ձեր Բարեկամ :

Յիսուս Վազարոսն իրեն բարեկամ
ստացաւ , ու երբոր մեռնիլը լսեց՝ լա-
ցաւ , ու նորէն կենդանացուց : Իրաւ-
ցընէ բարեկամը գանձ մըն է . բայց չեմ
ըսեր ան բարեկամներուն համար որ
դիւրաւ ամէն տեղ կը գտնուին , որոնց
մէկ խօսքով առի՛կ Բարեկամ կ'ըսենք . այլ
անոնց համար կ'ըսեմ որ իրենց հան-
գիստը զոհելով պատրաստ են ծառայե-
լու , օգնելու , խորհուրդ տալու և պաշտ-
պանելու . անոնց համար որոնց ծոցը
կրնամ ես արցունքս թափել , ապահով
ըլլալով որ ներումն ու կարեկցութիւն
պիտի գտնեմ :

Եւ զմանկական բարեկամութիւն-
ները , ո՞վ պատանեակք , որ այսօրուան
օրս դպրոցին մէջը իրարու հետ կը հաւ-

տատէք, ո՛ր գիտէ, թերեւս բոլոր կեանքերնուդ մէջ ձեզի ընկեր ըլլան. բայց բարեկամութիւն տւողական ըլլալու համար՝ փոխադարձ իրարու վրայ սէր ու մեծարանք պէտք է ունենալ. և այդ սէրն ու մեծարանքը առանց առաքինութեան չեն ըլլար: Սիւնի առաքինի մարդու հետ բարեկամ եղիր, որ միանգամայն խոհեմ ըլլայ ու կարենայ չգիտցածդ սովորեցնել, գաղտնիքդ պահէ ու խորհուրդ տայ: Միտե՛ք մարդու մը կարծիքին հետևողը՝ շատ չանցնիր կը զըզջայ. բայց զգուշացիր անոնցմէ որ զքեզ միայն գովել գիտեն ու շողոքորթութեամբ ատենորդ ալ կը բարձրացնեն: Ո՛ր էր Բարեկամին անհաճոյ ըլլալէն էլ լսելէ՝ այնպիսին արժանի ալ չէ նաեւ հաճոյ ըլլալու: (Դ)է որ յանդիմանուիս՝ սիրով մոտիկ ըրէ, յիշելով՝ որ ալ լաւ է բարեկամին հարուածը՝ քան թէ թշնամոյն համբոյրը:

Դժաժ եղած է թէ երեք բանով բարեկամ մը հաստատուն կը մնայ. առջիկէն պատուելով, ետեկէն գովելով, կարօտութեան ատեն օգնելով. միտքդ պահէ ասոնք:

Մենքնիս ալ մեր տկարութիւններն ունինք՝ ուստի բարեկամ բարեկամի մէջ պէտք է արգահատող ըլլայ. առաքինի ու քաղաքակիրթ մարդ մը էր Բարեկամը պահպանութեան հանդէսէն էլ. ոչ երբեք կը մատնէ, և կամքին դէմ գործելէն կը խորշի. կը ջանայ զինքը ուրախացնել և օգտակար ըլլալ, ինչուան նաև իր անձին փաստով ալ. ուրիշներուն առջիկ պակասութիւնները կը ծածկէ, բայց նաև կը ջանայ որ ուղիւ. շատ մեծ բաներ չպահանջեր, սիրով իր վշտերը մոտիկ կ'ընէ ու բարեկամին հեռանալէն ալ ետքը՝ ինքը չդադրիր նոյնպէս անոր բարիքն ուզելէն. աւելի ևս իր սէրը հիւանդութեանցն ու կարօտութեանցը մէջ կը ցուցնէ, վասն զի Բարեկամութեան մէջ Բարեկամութեան ինքնը յայտնի է ըլլայ. եթէ գոտութիւն մը ծագի կը ջանայ պատճառները վերցընել: Ի՛նչ խելք է հաճոյից մը կամ բանի մը յամառելով գանձ մը կորսնցնել:

Իսկ եթէ բարեկամը չափը անցնէ, ուղղէ զինքը, ու բոլոր ջանքդ թափէ զինքը բարի ճամբուն մէջ հաստատուելու. թէ որ չկարենաս յաջողիլ՝ բաժնուէ, բայց միշտ աս ալ գիտնաս որ բարեկամութիւնը կրնայ քակուիլ՝ բայց պէտք չէ կտրուի: Եթէ բարեկամութեանդ կը դադրիս՝ մի դադրիր անով իր բարւոյն փափաքելէն:

ԾԴ

Չարասէրք:

Եւս անձը ինծի չարիք ընել ու փասել կը ջանայ. բայց ես արդեօք պատճառ տուեր եմ իրեն՝ թէ չէ. եթէ տուեր եմ, պէտք չէ ամբնամ խոնարհելու ու իրմէ թողութիւն խնդրելու. և այսպէս բարեկամ մըն ալ կը ստանամ և թշնամիէ մը կ'ազատիմ: Սէն Բարեկամի մը փայնութիւնը շատ է. Իսկ Բարեկամի մը փայնութիւնը շատ է:

(Դ)է որ նախատինք ըրած ըլլայ ինծի. պէտք է միտքս բերեմ որ ինքն ալ ինծի պէս մարդ է, ու ամենքնիս ալ ենթակայ ենք սխալելու. դարձեալ պէտք է մտածեմ որ պակասութեանցը հետ ունի խել մ'ալ կատարելութիւններ: Եւ ազատութեամբ պէտք է զինքը դատեմ, եղած նախատինքը աւելի մեծ չըմբռնելով, և միտքս պէտք է դրնեմ, որ կամ սգիտութեամբ և կամ սխալմամբ էր ըրածը. գթութեամբ պէտք է սանձեմ իմ բարկութիւնս որ իրեն դէմ կը զգամ. բարեսրտութեամբ պէտք է զինքը փոխադարձ նախատելէն զգուշանամ և վեհանձնութեամբ որչափ կարելի է շուտով հետն հաշտուիլ ջանամ:

Եւ, չեմ ուզեր սրտիս մէջ ուրիշի դէմ ատելութիւն ունենալով քուն ըլլալ: Ուրիշի հետ թշնամութիւն ունենալով ինչպէս կրնամ աղաչել զՍտուած ու ըսել՝ որ ինչպէս ես իմ պարտապաններուս էլ Բարեկամի նոյնպէս դո՛ւ ալ ինծի Բարեկամութեան: Պէտք է որ հետը խաղաղութիւն ընեմ՝ առանց որոյ երջանկութիւն չը

կայ . իսկ հաշտուէլէն վերջը՝ պէտք է ամէն բան մոռնամ :

Չարերէն պէտք է հեռու կենամ . վասն զի բոլոր ոչխար մը կրնայ բոլոր հօտն ապականել . պէտք է զգուշանամ նաեւ այն ամէն բանէ որ կերպով մը իւրենց չարութեանը սրտաճառ կրնայ ըլ-

լալ . Բայց ինչ որ ալ ըլլան անոնք ալ մարդիկ են , իմ եղբայրներս են . Բո-տուած արեւը նաեւ անոնց համար ալ կը ծագէ , ուստի պէտք է զգուշանամ որ իմ բռնած խիստ կերպովս աւելի չգրգռեմ ու չզայրացնեմ կրքերնին :

Կը շարունակուի :

ՀՈՎՈՒԱԿԱՆԱՅՆ

ՊՈՔԱՐՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎԵՐ

ԾԱՂԿԱՔԱՂ ՈՒԹԵՐՈՐԴ

ԴԵՂԱՏՈՒ

Կրկնակի հովուերգութեանս այսորիկ են մասունք . յառաջումս պատանին Դամոն իբր տարփաւոր Նիսայ օրիորդի սրտառուչ յօրինէ բողոք վասն նախամեծար առնելոյ նորա քան զինքն զՄոփսոս նախանձորդ իւր . իսկ յերկրորդումս Ալփեսիբէ իբր դեղա-տու՝ զօտարացեալն յիւրմէ զպատանին Դափնի կախաբղանօք ի սէր իւր հնարի դարձու-ցանել . զերկոսին եւս կեղծ ի կեղծ ի ներքս ածելով քերթողին :

ԴԱՄՈՆ ԵՒ ԱԼՓԵՍԻԲԷ

ԸզՄուսայն , հապա , զհովուացն Բլփեսիբեայ եւ զԴամոնի ,
Ընդ որս երինջ իսկ ի յակճիւ կայր մոռացեալ զիւրն ըզճարակ ,
Եւ լուսակունք յապուշ ընդ տաղս հարեալ նոցին յերգոցն ի վէճ ,
Եւ ի գնացիցն ըստերիւր կասէին գետք ոտնակառեալ ,
ԸզՄուսայն երգեսցուք զԲլփեսիբեայ եւ զԴամոնի :
Ձեռն ինձ տուր , թէ զՏիմաւեայ մեծին հատեալ անցանես ժայռս ,
Եւ թէ շուրջ դու զլիւրիկեան յածեալ շըրջիս ըզծովափամբ .
Իցէ՞ զի լիցի ինձ զարուծիւնքս քո երգել ,
Իցէ՞ զի տացի ինձ ընդ ոլորտըս տարփողել

10 Օտարժանիս սոփոկլեան կօչկացն ըզտաղս եւեթ քոյին :

Բեւ ըսկիղքն արարի , ի քեզ ածեալ կատարեցից .

Ընկալ զառ ի քումմէ ձեռնարկեալ երգս ի հրամանէ .

Եւ թող բաղեղանս այսմիկ ի քոյդ շուրջ ի ճակատ

Ի մէջ յաղթականացրդ սարգենեաց սողոսկելոց :

Եւն ինչ ըստուերք զիշերոյ տեղի տըւեալ ցուրտք 'ի յերկնէ ,

Սինչ դեռ ցօղ յարօտ փափկիկ ախորժական է պախրէի ,

Յեց ի յողորկ ձիթենի սկըսաւ այսպէս երգել Դամոն :